ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դասական աճուրդ վաճառք, որը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին Ստեփանավանի համայնքապետարանում (հասցե՝ ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., շ. 1, 3-րդ հարկ, նիստերի դահլիճ):

Լոտ 1. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Պրոմեթևսի փողոց թիվ 8/5 հասցեում գտնվող, 0.00483 հա մակերեսով, 06-007-0105-0035 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 72500 /յոթանասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասում առկա հաղորդակցուղիներ չկան:
6. Տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումներ /ներառյալ սերվիտուտներ/ առկա չեն:

Լոտ 2. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. հողամաս հասցեում գտնվող, 0.52557 հա մակերեսով, 06-007-0740-0008 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամաս:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասում առկա հաղորդակցուղիներ չկան :
6. Տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումներ /ներառյալ սերվիտուտներ/ առկա չեն:

Աճուրդը անցկացվում է բաց: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ և Ստեփանավանի համայնքապետարանի 900255001688 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի՝ 5000 ՀՀ դրամի վճարման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Հայտ ներկայացնելու և աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու համար դիմել՝ Ստեփանավանի համայնքապետարան ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., շ.1, 2-րդ հարկ, 204 աշխատասենյակ:

Հայտերն ընդունվում են մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը Ստեփանավանի համայնքապետարանում յուրաքանչյուր երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00 - 14:00 ընկած ժամանակահատվածի):

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
հեռ.՝ (0256) 2 22 33,
էլ.փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com
Կայք՝ www.stepanavan.am

Ստեփանավանի համայնքապետարան